Հանրապետական մանկավարժահոգեբանական
կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Գավառի թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ ԲՈՒԼԻՆԳԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Ուսուցիչ՝ Ելենա Չիչոյան

Մենթոր՝ Գոհար Շահինյան

Գավառ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
1 Բուլինգը և նրա բաղադրիչները 4
2 Բուլինգի վտանգները 8
3 Բուլինգն արգելվում է օրենքով 8
4 Բուլինգի ենթարկող (հալածող) երեխաներ 9
5 Բուլինգը դպրոցներում 12
6 Համադպրոցական պայքար բուլինգի դեմ 13
Եզրակացություն 17
Գրականության ցանկ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրտսեր և միջին դպրոցականները, չունենալով կոնֆլիկտների խաղաղ լուծման հմտություններ, երբեմն վիճում, հարվածում և վիրավորում են միմյաց, սակայն հաճախ որոշ ժամանակ անց՝ համաձայնության են գալիս, խաղաղվում են երբեմն նույնիսկ ընկերներ են դառնում: Հատկապես տղաների համար ֆիզիկական ուժի կիրառումը ինքնահաստատման միջոց է: Այս ճանապարհով ստեղծված ոչ ֆորմալ ստորակարգային հարաբերությունները սովորաբար ընդունվում են դպրոցականների կողմից: Այլ դեպքերում նրանք ագրեսիա են ցուցաբերում, երբ իրենց վտանգված են զգում, ցանկանում են վերահսկել իրավիճակը, և որպես պաշտպանություն՝ նրանք կարող են բղավել , հարվածել կամ վնասել մյուսներին: Բնականաբար, այս վարքի ձևերը ոչ միայն ընդունելի չեն, այլև հանգեցնում են բռնության տարածմանը: Այս իմաստով, շատ կարևոր է պրոբլեմային իրավիճակներում ծագած խնդիրները առանց կոնֆլիկտի և բռնության հաղթահարելու, ինչպես նաև համոզմունքն ու վստահությունը ոչ ագրեսիվ մեթոդներով ցուցադրելու դպրոցականների կարողությունների զարգացումը: Ագրեսիվ վարքագիծ ունեցող դպրոցականների նմանատիպ գործողությունների հաղթահարման համար անհրաժեշտ է մշակել և կիրառել հատուկ ծրագրեր և մասնագիտական մոտեցումներ: Ընդ որում՝ կարևոր է հաշվի առնել երեխայի բռնության դրսևորման պատճառներն ու ձևավորել առանց բռնություն կիրառելու ինքնադրսևորման և ինքնահաստատման կարողություններ: Երեխաների կողմից դրսևորվող ոչ բոլոր ագրեսիվ վարքագծերն են, որ կարող են բուլինգ համարվել: Գոյություն ունեն բուլինգի տարբեր սահմանումներ, որոնցից յուրաքանչյուրը տարբեր ձևով է բնորոշում երևույթը: Ըստ շվեդ-նորվեգացի հոգեբան Օլվեուսի՝ <<Բուլինգը որևէ երեխայի ուղղված մեկ կամ մի քանի երեխաների երկարտև կանխամտածված հալածանքն է>>: Հալածանքը ներառում է Ֆիզիկական, հոգեբանական(կամ երկուսը միասին) բռնությունը և մեկուսացումը:

1. Բուլինգը և նրա բաղադրիչները

Շատերին անծանոթ այս տերմինն գուցե առաջին հայացքից օտար մի բառ թվա, բայց երևույթը ծանոթ է բոլորիս: Բուլինգը (անգլ. bully՝ կռվարար, բռնարար)՝ անձի նկատմամբ կիրառվող ագրեսիվ վարքն է՝ հետապնդում, հոգեբանական տեռոր, ծեծ, հեգնանք, ծաղրանք, բամբասանքների տարածում:

Այն կարող է տեղի ունենալ ցանկացած կոլեկտիվում, բայց առավել վտանգավոր է դպրոցականների ու ուսանողության շրջանում: Բուլինգն իրականացնում են անձինք, ովքեր գերակա դիրք ունեն իրենց շրջապատում, և այս ամբողջ պրոցեսում նրանք միայնակ չեն, հաճախ շրջապատող մարդիկ, ովքեր ուղղակի լուռ հետևում են վկաների դերերում են հանդես գալիս:

Բուլինգի ենթարկվող անձը սովորաբար չի կարող ինքն իրեն պաշտպանել, ինչի համար և ընտրվում է բռնարարի կողմից, որպես զոհ: Դրանով և բուլինգը տարբերվում կոնֆլիկտից, քանի որ կողմերը հավասար չեն:

Բուլինգն ունի իր առանձնահատկությունները՝

1. Ուժերի անհավասար բաշխում
2. Բռնության կրկնվող բնույթ
3. Բուլինգի ենթարկվողի սուր էմոցիոնալ արձագանք

Բուլինգից տուժում են բոլորը՝ բռնարարը, բուլինգի ենթարկվողը, ինչպես նաև այլ մասնակիցները կամ ականատեսները:Բուլինգի առկայությունը վատագույն ձևով փոխում է մթնոլորդը՝ լինի դա աշխատանքային միջավայր, լսարան, թե դասարան:

Բուլինգը և նրա բաղադրիչ հանդիսացող գործողությունները կարող են տարբեր դրսևորումներ ունենալ՝

- Խոսքային՝ ծաղր, նվաստացում, սպառնալիք
- հոգեբանական՝ շորթում,ունեցվածքի փչացում, գողություն, սպառնացող թշնամական հայացք և խոսք
- սոցիալակն՝ խուսափում, անտեսում, համատեղ գործունեության ձևերում տարեկիցների ներգրավվածության խոչնդոտում, սադրանք, բամբասանքի տարածում, հալածվող երեխայի հետ այլ երեխաներին չշփվելու պարտադրանք, մեկուսացում
- ֆիզիկական՝ հրում, հարվածում, վայր գցում, ցավեցնում, ֆիզիկական ազատության սահմանափակում

●Կիբեռհետապնդում՝ ագրեսորը օգտագործում է սոցիալական ցանցերը և այլ տեխնոլոգիական ռեսուրսներ զոհին հետապնդելու և կեղծ հաղորդագրություններ ուղարկելու համար: Այս հաղորդակցման ուղիները լայնածավալ են, և հաղորդագրությունները շատ ավելի արագ են տարածվում:

●սեռական՝ սեռական նշանակության ոտնձգության կամ չարաշահման տեսակ է: Այս պարագայում սովորաբար հիմնականում զոհեր են ունենում աղջիկները, ինչպես նաև համասեռամոլ անձինք:

ՈՒսունասիրությունները ցույց են տվել, որ հալածված երեխաները հիմնականում ունենում են ցածր ինքնագնահատական և տարեկիցների կողմից չընդունված լինելու զգացողություն: Տարեկիցների հետապնդումը այս երեխաների մոտ կարող է առաջացնել տագնապի զգացողություն, երեխաներն անգամ կարող են հրաժարվել դպրոց գնալուց: Նման երեխաների մոտ կարող են դրսևորվել հոգեմարմնական մի շարք ախտանիշներ, որոնք երբեմն կհանգեցնեն դեպրեսիայի առաջացման: Օլվեուսը նկարագրել է , թե ինչպիսի անձնային որակներ են , որոնք որոշ երեխաների կարող են բուլինգի ավելի հավանական թիրախ դարձնել:

Նա նշել է հալածվող երեխաների բնութագրիչները՝

- երկչոտություն, անվստահություն
- զգուշավորություն, մտահոգվածություն, զգայունություն,մեղմություն
- շփումներից խուսափոխականություն, պասիվություն, լացկանություն
- ցածր ինքնագնահատական
- ընկերների բացակայություն
- գերպաշտպանվածություն ծնողների կողմից
- ոչ ագրեսիվություն(որոշ բացառությամբ)
- ֆիզիկական թուլություն

Նշված որոշ որակներ բնածին են , մինչդեռ մյուսները ձևավորվում են երեխայի դաստիարակության ընթացքում: Սովորաբար գերպաշտպանության ներքո գտնվող երեխաները կարծում են , որ իրենք չեն կարող պաշպանել սեփական անձն, և հույսը դնում են մեծահասակների վրա:

Արդյունքում՝ չեն ձևավորվում այդ երեխաների ինքնապաշտպանության և պայքարելու կարողությունները: Նման դեպքում ծնողները ամիջապես արձագանքում են երեխայի խնդիրներին կամ կարիքներին, նույնիսկ չսպասելով, վերջիններս իրեն օգնության դիմեն: Այսպիսի վերաբերմունքով ծնողները երեխաների մեջ ստեղծում են տպավորություն, որ իրենք ինքնուրույն չեն կարող հոգալ սեփական կարիքները և կարգավորել միջավայրի հետ իրենց հարաբերությունները: Նման վարքագիծ դրսևորող ծնողները հնարավորություն չեն տալիս երեխաներին սովորելու, թե ինչպես պետք է հաղթահարել դժվարությունները և ընդունել մարտահրավերները: Չնայած այս ամենի հիմքում ընկած են ծնողական սերն ու հոգատարությունը, սակայն այն հանգեցնում է երեխաների անվստահության ձևավորմանը:

Հայտնվելով տարբեր խնդրահարույց իրավիճակներում՝ նման երեխաները նահանջում են՝ ակնկալելով մեծերի աջակցությունը: Հասակակիցների հետ դրական փոխհարաբերություններ կառուցելու և ընկերներ գտնելու կարողությունների զարգացման փոխարեն նրանք նախընտրում են ժամանակն անցկացնել մեծահասակների հետ:

Բուլինգի ենթարկված երեխաների երկարատև հետազոտությունների արդյունքները փաստել են , որ տարեկիցների հետ փոխհարաբերությունների որոշ խնդիրներ կարող են կարգավորվել պատանեկության ավարտին, սակայն ցածր ինքնագնահատականը և ընկճված հոգեվիճակը կարող են պահպանվել: Նման խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել նրանց սոցիալականացման կարողությունների զարգացմանը, ինքնագնահատականի կարգավորմանը և ինքնավստահության բարձրացմանը: Անշուշտ, այս խնդիրներն անհնար է լուծել՝ առանց ծնողների հետ համագործակցության:

Հաճախ նման իրավիճակներում հայտնված երեխաները կարծում են, ու իրենց հանդեպ իրականացող բուլինգն արդարացված է, իրենք արժանի են նման վերաբերմունքի: Նման ընկալումը և սեփական անձի հանդեպ վերաբերմունքը այս երեխաներին հարմար թիրախ է դարձնում միջավայրի համար այնքան ժամանակ, քանի դեռ նրանք ոչ միայն կարծում են, որ իրենք արժանի են դրան, այլև նույնիսկ ծայրահեղ իրավիճակներում չեն կարողանում արդարանալ ,պաշպանել իրենց: Բուլինգ իրականացնելուն հակված երեխաները հեշտությամբ նրանց որպես թիրախ են ընտրում,

ձևավորում են հալածող-հալածվող փոխհարաբերություններ՝ ցուցադրելով սեփական գերիշխանությունը:

Բուլինգը սովորաբար տեղի է ունենում մեծահասակների բացակայության դեպքում, իսկ հալածվող երեխաներն իրենց ցածր ինքնագնահատականի, ամաչկոտության, ցածր ինքնավստահության և մեղքի զգացման պատճառով տեղի ունեցածի մասին ուրիշներին, հատկապես ՝ մեծահասակներին չեն հայտնում:

Բուլինգի կանխարգելման, դպրոցում առկա հալածանքի իրավիճակների համար կարևոր է կրթական միջավայրում այնպիսի արժեհամակարգի ձևավորումը, որը կնպաստի բուլինգը որպես սխալ և անընդունելի վարքաձև համոզմունքի ձևավորմանը:

Բուլինգին արձագանքելն ու այն կանխելը կարևոր նախապայման է հատկապես խոցելի խմբի երեխաների հետ աշխատելու տեսակետից: Կարևորն այն է, որ հալածվող երեխաներին պաշտպանելը կամ նրանց մասին հոգալը ոչ թե դիտվի որպես խնդրի լուծում, այլ իրականացվի բուլինգի ենթարկվող երեխաների սոցիալականացման կարողությունների զարգացման, համարժեք ինքնագնահատականի ձևավորման և սեփական ուժերին վստահելուն ուղղված մանկավարժահոգեբանական աշխատանքների: Բնականաբար, սա երկարատև և քայլ առ քայլ ընթացող գործընթաց է , սակայն միայն այս դեպքում է, որ ներդրված ջանքերը կարող են արդյունավետ լինել: Ի տարբերություն այսպիսի մոտեցման՝ սովորաբար բուլինգի ենթարկվող երեխաներին ծնողների ցուցաբերած արձագանքը հաճախ միայն լինում է հալածվող երեխային պաշտպանելը և հալածողին պատժելու պահանջ ներկայացնելը, սակայնինչպես նշվեց, պաշտպանությունն խնդրի ժամանակավոր լուծումն է: Բուլինգը կանխելու կամ դադարեցնելուց հետո շատ կարևոր է օգնել երեխային՝ ձեռք բերելու այնպիսի կարողություններ և անձնայն որակներ, որոնք թույլ կտան նրան հետագայում նմանատիպ իրավիճակում հայտնվելիս ճիշտ վարքաձև դրսևորել կամ տարեկիցների միջավայրում այնպես ներկայանալ, որ հալածանքի ենթարկվելու առիթներ չլինեն:

2.Բուլինգի վտանգները

Երեխաների դեպքում նամանավանդ դեռահասության շրջանում, դպրոցական բուլինգը առավել վտանգավոր է: Այդ տարիքում մարդը փնտրում է իր կյանքի իմաստները, իր ճանապարհը, ինքն իրեն: Ու հանկարծ այդ ճանապարհին հանդիպում է բռնության, որը սովորաբար, հենց այն առանձնահատկության հիմքով է լինում, որը կարող է դառնալ նրա վստահության, որպես անձ հաստատվելու կարևոր անկյունաքարը: Յուրահատուկ արտաքին տեսքը, տարբերվող մտածելակերպը, սիրած զբաղմունքը, առողջական առանձնահատկությունները, սեռական կողմնորոշումը, ընտանիքի սոցիալական ծանր պայմանները և այլն:

3 Բուլինգն արգելվում է օրենքով

Շատ կարևոր է իմանալ, որ բուլիինգը արգելվում է օրենքով: Մի շարք երկրներ, ինչպիսիք են Կոլումբիան, Միչիգանը, Մոնտանան, Հյուսիսային Դակոտան, Հարավային Դակոտան, բուլիինգը դատապարտում են օրենքով: ԱՄՆ-ի քառասունհինգ նահանգները նույնպես ընդունել են հակաբուլիինգային օրենքներ:

4. Բուլինգի ենթարկող (հալածող) երեխաներ

Բռնության հակված երեխաները ունենում են հետևյալ բնութագիչները՝

- ագրեսիվ են (ուսուցիչների և ծնողների, ինչպես նաև այլ երեխաների հանդեպ),
- բռնկվող են, դյուրագրգիռ,
- ձգտում են լինել դոմինանտ և ճնշող,
- կարծում են, որ շրջապատող աշխարհը վտանգավոր է, ոչ բարյացակամ,
- զուրկ են կարեկցելու կարողությունից,
- ունեն իրեց ուժը, դիրքը անհատապես ճանաչելու ընդգծված պահաջմունք,
- ունեն գերարտահայտված դրական կարծիք սեփական անձի մասին,
- տարեկիցներից ֆիզիկապես ուժեղ են(տղաները),
- տարեկիցների շրջանում միջին կամ միջինից պակաս համակրանք են վայելում:

Տարբեր հետազոտողների կողմից իրականացրած երկարատև ուսումասիրությունները փաստում են , որ պատանեկության ավարտին բուլինգ իրականացնողների 60 % -ը մեղադրվում է քրիական զազանցանքի կամ այլ օրինախախտման համար, իսկ 40 %-ն արդեն դարձած են լինում կրկնակի օրինազանցներ: Նման մտահոգիչ վիճակագրությունն վկայում է բուլինգի դեմ վաղ պայքարելու կարևորությունը: Մասնագետները կարծում են , որ դպրոցական միջավայրում բուլինգի կանխարգելմանն ուղղված ծրագրերն ավելի արդյունավետ են վաղ տարիքային խմբում, քանի որ, հետազոտություններն ցույց են տվել, որ երեխաների հասունանալուն զուգընթաց՝ նվազում է վարքագծի և արժեհամակարգի մեջ դրական փոփոխությունների իրականացման հնարավորությունները:

Բուլինգ իրականացնելուն հակված երեխաները ագրեսիվ են նաև մեծահասակների հանդեպ: Նման երեխաները մեծանում են այնպիսի ընտանիքներում, որտեղ առկա չեն ջերմ փոխհարաբերություններ: Սա չի նշանակում ,որ նման երեխաները անտեսված են եղել, նրանք կարող են ստանալ լավ կրթություն , սնունդ, խնամք, սակայն ծնողները բավականաչափ ուշադրություն չդարձնեն երեխաների հուզական և զգացմունքային կարիքների բավարարմանը:

Բուլինգ իրականացնելուն հակված երեխաների ծնողները պահանջկոտ չեն , սահմանափակումներ չեն կիրառում, հանդուրժող են իրենց երեխաների ագրեսիվ վարքագծի հանդեպ, հետևողական չեն երեխաների դաստիարակության խնդիրներին: Որոշ դեպքերում նման երեխաների ծնողներն իրենք են ագրեսիվ արձագանքում երեխաների կողմից իրենց իսկ սահմանած կանոնների խախտումներին:

Բուլինգ իրականացնելուն հակված երեխաների ուսումնասիրությունը ցույց է տալիս , որ նրանց որոշ հատկանիշներ բնածին են: Օրինակ՝ նրանք արագ բռնկվող են, սակայն որոշ որակներ նրանք ձեռք են բերում դաստիարակության արդյունքում՝ կարեկցելու ցածր մակարդակ, ուրիշների ճնշելու ցանկություն: Նման երեխաների վարքը շրջապատի կողմիից վրդովմունքի է արժանանում: Կարևոր է ,որ նման երեխաները սովորեն վերահսկել իրենց հուզական պոռթկումները: Ագրեսիվ վարքագիծ ունեցող երեխաներին պատժելն որևէ արդյունքի չի հանգեցնի:

Բուլինգի պատճառներից մեկն էլ բուլինգ իրականացնող երեխաների մեջ կարեկցելու կարողությունների անբավարարությունն է կամ բացակայությունը: Այս իրավիճակի հաղթահարման համար անհրաժեշտ է երեխայի միջավայրում սահմանել հստակ և արդար կանոններ և դրական վերաբերմունքով ու վարքագծով ապացուցել, աշխարհը կարող է լինել անվտանգ ու ընկերական, փոխադարձ հարգանքի վրա կառուցված փոխհարաբերություններով:

Գոյություն ունի երեխաների մի փոքր խումբ, որոնք թե՝ բուլինգ իրականացնող են, թե՝ բուլինգի թիրախ: Որպես կանոն նման երեխաները բուլինգի են ենթարկվում իրենցից ավելի ուժեղ տարակիցների կողմից, և ի պատասխան դրա՝ իրենք էլ հալածում են իրենցից ավելի թույլ երեխաներին կամ բռնությանը հակված երեխաներին հրահրում են հալածել իրենցից թույլերին:

Այս երեխաներն ավելի վտանգավոր խմբում են : Որպես զոհեր՝ նրանք տառապում են սոցիալապես ընդունված չլինելու և ցածր ինքնագնահատականի պատճառով, միաժամանակ որպես բուլինգ իրականացնողներ ՝ նրանք գիտակցում են, որ իրենց վարքագիծն անվերահսկելի է և անընդունելի: Այս երեխաները սովորաբար լավ չեն սովորում, և բնութագրվում են որպես <<վատ>> աշակերտներ:

Նրանց անհրաժեշտ է աջակցել ՝ զարգացնելով թե՝ հալածվողի, թե՝ հալածողի մեջ բացակայող որակներն ու սոցիալական հմտությունները:

Այն վարկածը , որ բուլինգը պայմանավորված է ընտանիքի սոցիալ- տնտեսական պայմաններով, դպրոցով և բնակավայրերով ըստ Օլվեսուսի փորձարարության տվյալների՝ չի հաստատվել:

Ապացուցված է, որ լրատվամիջոցներն ու սոցիալական ցանցերը նույնպես ազդում են երեխաների շրջանում բուլինգի դրսևորման հաճախականության և հավանականության վրա: Մեդիադաշտում առկա բացասական տեղեկատվությունը, բռնության տարրեր պարունակող մուլտֆիլմերը, կինոնկարները և համակարգչային խաղերը երբեմն դրականորեն ներկայացնելով բռնությունը՝ ձևավորում են ագրեսիվ վարքագիծ և, չեն արթնացնում կարեկցանք բռնության դրսևորումների նկատմամբ: Բռնություն քարոզող և սատարող դրսևորումները նպաստում են բուլինգի դաժան և հաճախակի դրսևորումներին:

5. Բուլիինգը դպրոցներում

Դպրոցներում հանդիպող բուլիինգը համաշխարհային խնդիր է, որը կարող է ունենալ վատ հետևանքներ դպրոցական միջավայրի համար, և կարող է խախտել այն օրենքը, որով յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ապահով կրթության: Բուլիինգի երևույթը քննարկել են մի շարք հայտնի հոգեբաններ, հետազոտողներ, կրթական հաստատություններ, այս առումով հատկապես ակտիվ մասնակցություն են ունեցել Սկանդինավյան մի շարք երկրներ, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, բայց դա չի նշանակում, որ այս հարցը չեն բարձրաձայնել այլ, ոչ այդքան զարգացած երկրներ: Այս հարցը արդիական է այնտեղ, որտեղ կա դպրոցական միջավայր, կամ ընդհանրապես միջավայր: Բուլիինգը ըստ ձևերի կարելի է բաժանել երկու խմբի՝ ուղղակի և անուղղակի: Ուղղակի բուլիինգի դեպքում դրսևորվում են հետևյալ վարքային ձևերը. Հարվածել, ծեծել, գողանալ, ծաղրել, անընդհատ բարացնել, վիրավորել, սպառնալ: Իսկ անուղղակի բուլիինգի դեպքում բուլիինգի զոհին մեկուսացնում են իր միջավայրից՝ ընկերներից, կանխամտածված մեկուսացնելով նրան այդ միջավայրից: հետազոտությունները փաստում են, որ ուղղակի բուլիինգի ձևը հիմնականում բնորոշ է տղաներին, իսկ անուղղակի բուլիինգի ձևը՝ աղջիկներին: Ուղղակի բուլիինգը ավելի հաճախ հանդիպում է կրտսեր դպրոցի, երբեմն էլ միջին դպրոցի երեխաների մոտ, իսկ անուղղակի բուլիինգը արդեն ավելի հասուն տարիքում՝ միջին դպրոցում: Չնայած այս դասակարգմանը, և անուղղակի, և ուղղակի բուլիինգը հանգեցնում է նույն արդյունքին՝ մարդու ֆիզիկական և հոգեբանական ճնշվածության:

6. Համադպրոցական պայքար բուլինգի դեմ

Բռնությունից զերծ դպրոց ստեղծել կարելի է, եթե առկա է հետևյալը՝

● ուսումնական ծրագրերն ու կանոկակարգերն ուղղված են դպրոցի սոցիալական միջավայրի փոփոխությանը

●ուսուցիչները, աջակցող աշխատակազմը, աշակերտները և ծնողները բուլինգի դեմ պայքարելու և դպրոցում դրական մշակույթ ստեղծելու գործընթացում ստանձում են որոշակի դերեր

●բոլոր ուսուցիչները ստանձում են բուլինգի միջադեպերը կանխելու և կարգավորելու պատասխանատվություն, եթե անգամ իրենք միջադեպին մասնակցող երեխաների հետ անմիջականորեն չեն աշխատում

●տարիքային բոլոր խմբերի աշակերտները պիտի մասնակցեն իրենց ճանաչողական հետաքրքրություններրին համապատասխան կազմակերպված գուրծունեության ձևերին, և ոչ թե միայն այն

Սակավաթիվ աշակերտները, որոնք ընդգրկվել են ռիսկային կամ խոցելի խմբերում,

●բուլինգի կանխարգելման ու հաղթահարմանն ուղղված գործողություններն ու գաղափարները ներառվում են դպրացական ծրագրերում և դպրոցի այլ միջոցառումներում

● բուլինգի կանխարգելման ու հաղթահարմանն ուղղված գործողություններն ընդգրկվում են մանկավարժական խորհրդի ռազմավարության մեջ, ինչպես նաև ուսուցիչների, գործընկերների, աշակերտների և ծնողների հետ իրականացվող պաշտոնական և ոչ պաշտոնական համագործակցության ծրագրերում

Դպրոցում տեղի ունեցած որևէ միջադեպի արդյունքում ցանկացած խնդրի առաջացման դեպքում հասարակությունը հաճախ մեղադրում է դպրոցներին՝ ասելով, , որ <<այդ խնդիրը նրանց պատասխանատվության դաշտում է, և նրանք էլ պետք է լուծեն>>: Այսպիսի իրադրությունից խուսափելու համար դպրոցը պետի ակտիվորեն համագործակցի տվյալ համայքի բոլոր շահագրգիռ կառույցների հետ:

Երեխաների շրջանում բռնությունտ կանխելու հանրային արշավը պիտի բացահայտի բուլինգի խնդիրը և դրա մասին համապատասխան տեղեկատվություն տարածի: Համայքի ներգրավումը դպրոցի կողմից իրականացվող բուլինգի հաղթահարման և կանխարգելման ծրագրերին, հնարավորության դեպքերում՝ նաև ֆինանսական աջակցությունու մեծապես կնպաստի խնդիրների առաջացման և լուծման հարցերում հավասար պատասխանատվություն կրելուն: Այսպիսի մոտեցմամբ համայքները կարծես հստակ ուղերձ են հղում դպրոցներին <<Դուք միայնակ չեք ,մենք բոլորս ձգտում ենք դադարեցնել բուլինգը>>:

Միաժամանակ անառարկելի է, որ բուլինգի նկատմամբ համադպրոցական արձագանքը զգալիորեն նվազեցնում է այդ երևույթի դեպքերը՝ ի տարբերություն միայն մասնագետների կամ մի խումբ մարդկանց կողմից իրականացվող ծրագրերի: Բուլինգը կարող է անընդունի երևույթ համարվել միայն այն դեպքում, երբ համայքում արժեհամակարգը մերժում է բռնությունը: Բռնության նկատմամբ համադպրոցական արձագանքն կարևոր բաղադրիչ է: Քանի դեռ մեծահասակները չեն արձագանքում բուլինգին, բռնի վարքագիծը շարունակում է ստանալ նրանց լուռ համաձայնությունը:

Դպրոցում, որպեսզի ստեղծվի բուլինգից զուրկ միջավայր , անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը՝

●Խնդրի ներկայացում և նրա վերաբերյալ իրազեկության բարձրացում

ՈՒսուցիչների, աշակերտների և դպրոցին աջակցող անձնակազմի շրջանում բռնության հիմնախնդրի մասին տեղեկատվության մակարդակի բարձրացում

●Դասարանի և դպրոցի արժեքների, կանոնների ր դրանց խախտման հետևանքների սահմանում: Բուլինգի կանխարգելման միջոցառումները ցույց են տալիս, որ երեխայի անձնական պատասխանատվության բարձրացումը խրախուսելու մեթոդով, արդյունավետ է բռնի վարքագծի նվազման առումով և ավելի երկաժամկետ ազդեցություն է ունենում: Կրթության արդյունավետության մասին հետազոտությունները ցույց են տալիս, պահանջկոտ ուսուցիչ- աշակերտ փոխհարաբերությունները բռնության կանխարգելման լավագույն գրավականն են:

●Պաշտպանիչ ցանցի հիմնումն ու գործարկումն

Դպրոցական արժեքներն ու կանոնները հաստատվում են միայն այն բանից հետո, երբ ամբողջ դպրոցը տեղեկացված է տարեկիցների միջև բուլինգի գոյության ու ծավալի մասին :Դասարանում պաշտպանիչ ցանցի հաստատումը իրականացվում է մի շարք թեմաների քննարկումով:

●Համագործակցություն համայքի շահագրգիռ կողմերի հետ

Դպրոցի և համայքի համագործակցության արդյունքում ձևավորվող կարևոր և հիմնական ուղերձը հետևյալն է. <<Բուլինգի հաղթահարումը միայն դպրոցիխնդիրն չէ, այն համայքի բոլոր սոցիալական և կրթական դեր ունեցող կառույցների պատասխանատվությունն է>>:

●Հորդոր աշակերտներրին՝ <<բուլինգին ենթարկելու կամ ականատեսը լինելու դեպքում դիմել օգնության>>:

Անկախ աշակերտների օգնության դիմելու փաստից՝ բռնի վարքի արտահայտումները զգալիորեն նվազում են՝ պայմանվորված աշակերտների մեծամասնության վարքով և բռնի վարքին մեծահասակների արձագանքման արդյունավետությամբ: Եթե աշակերտների մեծ մասը այնուհանդերձ շարունակում է թաքցնել եղելությունը, ապա արձագանքման և աձակցության նրանց կարիքը բավարարված չէ: Եթե ուսուցիչները միայն ձևական են խոսում բռնության դեմ պայքարելու մասին՝ առանց իրական քայլերի, ապա աշակերտները չեն դիմի նրանց օգնությանը,և դպրոցներում բռնության դրսևորումները չեն նվազի:

Կարևոր է, որ բոլոր աշակերտները դիմեն օգնության, այլ ոչ միայն՝ բռնության զոհերը:Երբ աշակերտները չեն դիմում օգնության , դա նշանակում է, որ իրենք չեն հավատում բռնության դեմ հանդես եկող մեծահասակների անկեղծությանը, կամ բռնությունը կասեցնելու նրանց գործողությունների արդյունավետությանը:

Աջակցություն դպրոցներին՝ սեփական կանոնակարգերով գործելու հարցում:

Դպրոցներում բռնության դեպքերի ուսումնասիրությունը հիմնականում իրականացնում են դասղեկները: Որոշ ծանր դեպքերում անհրաժեշտ է ներգրավել նաև դպրոցում գործող կամ այլ կառուցների մասնագետների: Երբեմն դպրոցի աշխատակիցների համար դժվար է լինում գնահատել , թե երբ է բռնի վարքը <<հատում սահմանը>> և վերածվում հակասոցիալական վարքի:

Այդ դեպքում անհրաժեշտ է դեպքի մասին տեղեկացնել ոստիկանությանը, սոցիալական ծառայությանը կամ այդ հիմնահարցերով զբաղվող այլ կառուցների:
Բուլինգի հակված երեխաների վարքային դրսևորումներին արձագանքման նախատեսված աշխատանքները պետք է նպաստեն.

Հուզական ինտելեկտի ձևավորմանը, սեփական արարքների հանդեպ պատասխանատվության ստանձնելու կարողության զարգացմանը, դրական վարքագծի ձևավորմանը, այլոց, հատկապես մեծահասակների նկատմամբ վստահության ձևավորմանը, ուսուցիչների հավասարակշռված պահվածքի ապահովմանը, ինքնավերահսկման կարողության ձևավորմանը. աջակցություն դպրոցներին՝ բուլինգից զերծ միջավայր ստեղծելու գործընթացում

Եզրակացություն

Համաձայն երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի դրույթների, Նախադպրոցական և Հանրակրթության մասին օրենքների, երեխաների և դեռահասների շրջանում բռնության կանխարգելման ազգֆային ծրասգրի և երեխայի իրավունքների և ժահերի պաշպանության ազգային պլանի .

Առաջնորդվելով այն համոզմունքով, որ երեխաները պետք է ստանան մեծահասակների աջակցությունը, պաշպանությունը և ուղղորդումը , իրավունք ունեն ակտիվ մասնակցելու ր աստիճանաբար իրենց կարողություններին համապատասխան պատասխանատվություն ստանձնելու.

Հասկանալով , որ դպրոցն ունի կարևոր և անփոխարինելի դեր երեխաների կրթության հարցում, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ անընդունելի վարքի պատճառներին պետք է անդրադառնալ միայն երեխաների և դեռահասերի զարգացման գործընթացին մասնակցող բոլոր հիմնական գործող անձանց ամբողձական համագործակցությամբ.

Ընդրկելով աշակերտների, ուսուցիչների, դպրոցի այլ աշխատակիցների, ծնողների և համայքի համատեղ գործողությունների կարևորությունը անվտանգ և նպաստավոր միջավայրի ստեղծման գործում:

Փորձարարական հետազոտության արդյունքում դպրոցական կոլեկտիվում բուլինգի առկայությունը, հաստատում է թեմայի արդիականությունը. Վերը նշված մեթոդներով կարելի է բացահայտել բուլինգը և կանխել:

Գրականության ցանկ

1.https://hy.wikipedia.org/

2.https://aybschool.am/am/3

. page/bullying

3 . https://www.swv.am/

4. ԱԲՄԱԴ

5. Ն.Յու.Սինյագինո Դպրոցը՝առանց բռնության:Մեթոդական ձեռնարկ

6. Սոբկին Վ. Ս., Մարկինան,Հ. Ս. Ազդեցությունը : Մեթոդական ձեռնարկ

7.Հոգեբանականանվտանգությանխնդիրներըդպրոցում": 2010. [Էլեկտրոնային ռեսուրս].